



«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական
հիմնադրամ
Ք. Երևան 0009, Կորյունի 19ա,
ք. Դիլիջան 3905, Մոլդովական 77
Հեռ.՝ + 374 10 592762, + 374 94 543707
Էլփոստ՝ welcome@dcs.am
Կայքէջ՝ www.dcs.am

ԴԿԴ 2023-24 ուստարվա ընդունելություն

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

8-րդ դասարան

Անուն, ազգանուն _____ Ամիս, ամսաթիվ _____

Հանրահաշիվ

1. Հաշվել թվային արտահայտության արժեքը: [6]

A) $4^3 + (-3)^5 =$

B) $7 \cdot \left(-\frac{3}{7}\right)^2 =$

C) $(-8)^2 - (-1)^{10} =$

2. Միանդամը ներկայացնել կատարյալ տեսքով: [4]

A) $-\frac{3}{7}a^2b^4 \cdot 4\frac{2}{3}a^3b^7 =$

B) $\left(-2\frac{1}{2}x^3y^5z\right)^2 \cdot 8x^6z^7 =$

3. Պարզեցնել արտահայտությունը: [8]

ա) $(8x^2 - 8x + 5) - (6x^2 - 2) =$

բ) $4y^2(3y - y^5) =$

դ) $(4x - y)(5y + 3x) =$

դ) $(a + b)b - (a^2 + b^2)(a - 2) =$

4. Վերլուծել արտադրիչների: /ընդհանուր հանել/ [8]

ա) $4xy + 2y =$

բ) $21mn^4 - 7m^3n =$

գ) $x(m - n) + 3(m - n) =$

դ) $9(a-b) - x(b-a) =$

5. Հաշվել՝ կիրառելով քառակուսիների տարբերության բանաձևը: [4]

$71 \cdot 69 =$

6. Լուծել հավասարումները: [10]

ա) $9 - 7(x + 3) = 5 - 4x$

բ) $7x - (4x + 3) = 3x + 2$

գ) $\frac{x-2}{4} - \frac{x+6}{24} = \frac{x-5}{12} + \frac{x-4}{8} -$

7. Գրել $(-3;0)$ և $(2;-1)$ կետերով անցնող ուղղի հավասարումը:

[6]

8. 6 ներկարար աշխատանքը կատարում են 5 օրում: Նույն արտադրողականությունն ունեցող քանի՞ ներկարար ևս պետք է հրավիրել, որպեսզի բոլորով միասին այդ նույն աշխատանքը կատարեն 3 օրում: [10]

9. Կոնֆետի երկու տուփերն ունեն 186 կգ զանգված: Հայտնի է, որ առաջին տուփի զանգվածը 3 անգամ մեծ է երկրորդ տուփի զանգվածից: Որոշել յուրաքանչյուր տուփի զանգվածը: [10]

Երկրաչափություն

10. Ուղղանկյուն եռանկյան սուր անկյուններից մեկը 60° է, իսկ ներքնաձիգի և փոքր էջի գումարը 45 սմ է: Գտնել եռանկյան պարագիծը: [10]

11. ABC եռանկյան մեջ $\angle B = 60^\circ$ է, իսկ ACB անկյանը կից BCE անկյունը՝ 120° : Ապացուցել, որ BCE անկյան կիսորդը՝ CK -ն, զուգահեռ է AB ուղղին: [12]

12. Տրված նկարում $AB = CD$ և $BD = AC$: Ապացուցել, որ $\angle CAD = \angle ADB$: [12]

